Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ու Թ Յ Ու Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԲԱԳՐԱՏ ԲԱԴԱԼՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

♦ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ

Բագրատ Բադալյան,

♦ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ,

♦ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Բելգիայի Թագավորություն, քաղաք Բրյուսել, 2019թ. ապրիլի 9-ից 11-ը,

♦ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԵՐԸ

Եվրոպական Հանձնաժողով,

♦ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցություն ԵՄ Արևելյան Գործընկերության Տրանսպորտային հարցերով պանելի 16-րդ նիստին,

♦ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ

2019թ. ապրիլի 10-ին ք. Բրյուսելում (Բելգիայի Թագավորություն) կայացել է ԵՄ Արևելյան Գործընկերության Տրանսպորտային հարցերով պանելի հերթական՝ 16-րդ նիստը:

Եվրոպական հանձնաժողովի կողմից կազմակերպված տրանսպորտային պանելի նիստի ընթացքում հիմնական անդրադարձը կատարվել է Արևելյան Գործընկերության երկրների առաջնային ենթակառուցվածքային ծրագրերին, տրանսպորտային հասանելիությանը եվրոպական ցանցին, ճանապարհային անվտանգության հետ կապված

խնդիրներին ու մարտահրավերներին, ինչպես նաև տրանսպորտային ցանցի զարգացմանն ուղղված ներդրումային հնարավորություններին:

Հանդիպմանը մասնակցել են Եվրոպական հանձնաժողովի, Արևելյան Գործընկերության երկրների, Եվրոպական ներդրումային բանկի, Համաշխարհային բանկի, կառավարության բարձրաստիճան ներկայացուցիչներ, ինչպես նաև փորձագետներ, ոլորտային քաղաքականություն մշակողներ և ներդրողներ:

Նիստի ընթացքում դիտարկվել են Արևելյան Գործընկերության երկրների տրանսպորտային ցանցի զարգացման նպատակով ներդրումների համար Եվրոպական Միության նոր ֆինանսական մեխանիզմները և սահմանվել տրանսպորտային բարեփոխումների քաղաքականության օրակարգը:

Քննարկվել են նաև այն ծրագրերը, որոնց իրագործումը պահանջում է հնարավորինս կարճ ժամանակահատված և հնարավորություն է տալիս վերջիններիս ավելի հեշտ գտնել ֆինանսավորման աղբյուրներ:

Քննարկումների ընթացքում ներկայացվել է 2019թ հունվարի 15-ին հրապարակված Տրանսեվրոպական տրանսպորտային ցանցի ինդիկատիվ ներդրումային գործողությունների ծրագիրը: Հաշվի առնելով, որ Արևելյան Գործընկերության երկրներում անհրաժեշտություն կա ճանապարհային բարելավման նպատակով մեծ ներդրումներ կատարելու, առաջարկվեց միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից ֆինանսավորում ստանալու նպատակով նախապատրաստել ԵՄ չափանիշներին բավարարող նախագծեր, որոնք իրենց մեջ կներառեն նախնական ուսումնասիրությունը, ճիշտ հաշվարկված ծախսերը, անվտանգության նորմերը, աուդիտը, բնապահպանական գնահատումը և այլն: Այդ նախագծերը պատշաճ նախապատրաստելու համար Եվրոպական ներդրումային բանկի կողմից առաջարկվեց օգտվել ԵՄ խորհրդատվական ծառայությունից:

Քննարկումների ընթացքում նշվեց, որ ֆինանսավորման ներկայացվող ծրագրերը պետք է հանդիսանան Տրանս-եվրոպական տրանսպորտային ցանցի մի մաս, համապատասխանեն պետության կողմից վարվող տրանսպորտային քաղաքականությանը և լինեն շարունակական:

Տրանսպորտային պանելի 16-րդ հանդիպման ընթացքում քննարկվել է նաև Ճանապարհային անվտանգության խնդիրներն ու միջոցառումները, ինչպես նաև դրա բարելավման ուղղությամբ ԵՄ ֆինանսական կառույցների կողմից աջակցությունը: Համաշխարհային բանկի ներկայացուցչի կողմից ներկայացվեց Արևելյան Գործընկերության երկրներում կատարված ուսումնասիրության արդյունքները: Ստատիստիկ տվյալների համաձայն նշյալ երկրներում ճանապարհների բարեկարգման զուգընթաց ճանապարհային անվտանգության վիճակը վատացել է, որը կախված է հիմնականում մարդկային գործոնից, մեքենաների արագ վարելուց, երթևեկության կանոններին չհետևելուց և այլն: Պայմանավորվածություն ձեռք բերվեց համատեղ քայլեր ձեռնարկել ճանապարհային անվտանգության բարձրացման նպատակով:

Ելնելով այն հանգամանքից, որ վերոնշյալ միջոցառումը հանդիսանում է նաև նախապատրաստական հանդիպում 2019թ. հունիսին 6-ին Լյուքսեմբուրգում կայանալիք Արևելյան Գործընկերության տրանսպորտային նախարարական նիստի համար՝ քննարկվեց նաև Եվրոպական Հանձնաժողովի աշխատակազմի կողմից կազմված Արևելյան Գործընկերության տրանսպորտի նախարարների հանդիպման Համատեղ Հռչակագրի նախագիծը:

Տրանսպորտի հարցերով պանելի ընթացքում անդրադարձ է կատարվել նաև գոտի և ճանապարհ նախաձեռնության և տրանսեվրոպական տրանսպորտային ցանցերի (TEN-T) միջև փոխգործակցությունը: Մասնավորապես ՝ քննարկվել է տրանսեվրոպական տրանսպորտային ցանցերի ընդլայնման հարցը դեպի ԵՄ անդամ չհանդիսացող պետություններ և դրանից բխող ծրագրային առաջնահերթությունները:

Քննարկվել է նաև Արևելյան Գործընկերության երկրների հեռանկարային դերը՝ որպես Եվրոպան և Ասիան կապող երկրների միջև կամուրջ, դրա իրականացմանն ուղղված ռազմավարական քայլեր ձեռնարկելու հնարավորությունները, ինչպես նաև մասնավոր հատվածից, ինստիտուցիոնալ ներդրողներից և հանրային բանկերից ֆինանսավորում ստանալու համար Արևելյան Գործընկերության երկրներում առանցքային տրանսպորտային ենթակառուցվածքի առաջնահերթությունների իրականացումը:

♦ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Միջոցառման շրջանակներում ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ Բագրատ Բադայլանին հնարավորություն ընձեռվեց երկկողմ հանդիպումներ ունենալ Եվրոպական ներդրումային բանկի, Համաշխարհային բանկի և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի ներկայացուցիչների հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվել են հարցեր՝ կապված Հայաստանի Հանրապետությունում Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի և Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման մայրուղու վերականգնման ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքների հետ, որոնք ընդգրկված են Եվրամիության Արևելյան գործընկերության առաջնային նախագծերի ցանկում և ուղղված են արևելյան տարածաշրջանի տրանսպորտային ցանցերը Եվրամիության տրանսպորտային ցանցերի հետ կապելուն:

♦ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բագրատ Բադալյան

15.04.2019թ.